



## Հակոբ Պարոնյան

### Ատամնաբոյժն արևելեան

Արարուած հինգերորդ

ՏԵՍԻԼ Ա.

ԵՐԱՆԵԱԿ, արքողի վրայ նստած թաշկինակի ձեռքին աչերը կը սրբէ

Մէ'ր... սէր. այս գիշեր ալ վանեցիր արտեւաններէս այն անուշ նինջը, որ սիրահարեալ սրտերու առժամանակեայ հանկուցիչն է. բաբէ', կը փախչի՞ս աչքերէս, գրկուեցայ ես քեզմէ, միայն արտասուք թափել մնաց ինձի բաժին եւ այն այս երիտասարդ հասակիս մէջ: Ամբողջ գիշեր թաշկինակի ձեռքին արտասուքս սրբելով ժամերուն անցնելուն կը սպասէի անկողնոյս մէջ... Ո՛վ Աստուած իմ, սիրոյ թակարդին մէջ իյնողներուն ինչ դժուար է եղեր քնանալը... սիրականէն հեռու: Ո՛հ, նինջդ անուշակ, անհաշտ թշնամիդ սիրոյ, ո՞ր ես, եկուր ծանրացի՛ր արտեւաններուս վրայ եւ ցրուէ՛ մտքէս դառն խորհուրդները, որք զիս ի գերեզման պիտի մղեն: Ահ, Լեւոն, չքնադդ իմ Լեւոն, քեզմէ հեռու մեռեալ եմ ես, քու ներկայութիւնդ է, որ հոգի կու տայ ինձի, կը սիրեմ զքեզ մահու չափ, կեանքս քեզի հետ անցնելու որոշած եմ, քեզի նուիրած եմ իմ սիրտս, քեզի համար ստեղծուած եմ... թող հայրս սպառնալեօք խրոխտայ եւ անէծք թափէ գլխուս, ընդունայն է... թող մեր սիրոյ ամրապինդ շղթայն քայքայել աշխատի, անօգուտ է. չպիտի յաջողի իր բարբարոսական ձեռնարկութիւնը: Ա՛հ, Լեւոն, առաջին անգամ որ տեսայ զքեզ, սիրեցի, քու մէկ նայուածքդ հրապուրեց զիս. եւ երբ խօսիլ սկսար, բառերը սիրաբոյր շուրթերէդ սահելով, սիրտս մտան վիրաւորեցին զանիկա, ոչ ոք կրնայ բուժել այն վէրքը բացի քեզմէ: Քու շունչդ

գեփիտի պէս քաղցր է, եւ երբ քաղցրաբոյր շուրթերէդ սկսի փշել անուշ բուրումն,  
կը ծաւալի շուրջանակի. իբր թէ անուշահոտ իտի սրուակի բերանը բացուէր, իսկ  
երբ շուրթերդ անշարժ դիրք մը առնուն, վարդի նախանձն կը յուզին. աղջիկ մ'են,  
չեն կարող նկարագրել, բանաստեղծ մը ըլլալու էի, որ ճիշտ քու պատկերդ ըսէի,  
եւ աղջիկ մը այսպիսի պատանի մը չպաշտէ, գո՞վ սիրէ... ինչպէս սիրտս կը  
բաբախէ: ( Պատուհանէն նայելով ) Ինչ կը տեսնեմ, Լեւոնն է... արդեօք կը  
սխալի՞մ: ( Աչքը սրբելով ) Նա ինքն է: ( Ասդիս անդին վազելով ) Ջիս գրկելու  
կու գայ, հասի՛ր, Լեւոն... միս մինակ եմ... հասի՛ր անգամ մը փարիս քեզի: ( Յնորածի պէս ) Եկո՛ւր վարդագեղ այտերէդ սիրոյ պտուղներ քաղեմ ( Միշտ  
վազելով ):

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆ, ՆԻԿՈ

ՆԻԿՈ, վազելով

Փախան թշուա...

ԵՐԱՆԵԱԿ, առանց Նիկոյին երեսը նայելու կը պլլուի

Ա՛հ, իմ սիրուն Լեւոնիկս...

ՆԻԿՈ

Ի՞նչ կ'ընէք, օրիորդ, պիտի խղդէք զիս:

ԵՐԱՆԵԱԿ

Ա՛հ դուն...

ՆԻԿՈ

Ես ի՞նչ յանցանք ունիմ... ես բռնեցի, անոնք փախան:

ԵՐԱՆԵԱԿ

Ահ, ես եմ, չքաժնուիս:

ՆԻԿՈ

Թո՛ղ զիս, երթամ գտնեմ:

ԵՐԱՆԵԱԿ, միշտ պլլուած

Ա՛հ, կ'ուզես զիս թողո՞ւլ:

ՆԻԿՈ

Օրիորդ... տիկին, փախուցի՞ր:

ԵՐԱՆԵԱԿ

Դուն կ'ատես զիս... դուն, Լեւոն:

ՆԻԿՈ

Խելքդ գլուխդ բեր:

ԵՐԱՆԵԱԿ

Դուն Լեւոնն ես, որ ուրիշի կերպարանօք կը ներկայանաս:

ՆԻԿՈ

Ես Նիկոն եմ, ձեր ծառան:

ԵՐԱՆԵԱԿ

Զիս խաբել կ'ուզես... պատուհանէն տեսայ դուն Լեւոն...

ՆԻԿՈ

Օրիորդ, Լեւոնը չեմ ճանչնար, եւ ոչ ալ Լեւոնն եմ:

ԵՐԱՆԵԱԿ

Լեւոնն ես դուն, Լեւոն... ( Պլլուած ):

ՆԻԿՈ

Լեւոնն ես... Լեւոնն ես... աս ի՞նչ փորձանքի հանդիպեցանք, բռնի Լեւոն ընել կ'ուզէ զիս... թող զիս երթամ, գործ ունիմ, օրիորդ, ես չեմ Լեւոնը, սատկի շուն շան որդին ով որ է. ես Լեւոնը չեմ գիտեր:

ԵՐԱՆԵԱԿ

Դուն Լեւոնն ես, դուն ինքզինքդ չես ճանչնար:

ՆԻԿՈ

Ըսելիք չմնաց. կարելի է որ ես սխալած ըլլամ:

ԵՐԱՆԵԱԿ

Հերիք է, մի՛ տանջեր զիս, քեզի համար կեանքս վտանգի մէջ դրած եմ: ( Պագնելով ) Որքան կը փափաքէի քեզ համբուրել. եւ դուն զիս չես պագներ:

ՆԻԿՈ

Համբուրեմ, տիկին... համբերէ... համբուրէ քիչ մը, հիմա կը համբերեմ... համբուրեմ ըսել կ'ուզեմ. ես ասանկ բան ըրած չունիմ... քաջալերուէ, Նիկո: ( Կը համբուրէ ) Ահ... ( Լեւոնը դրան առջեւ կը տեսնուի ): Ծունկերս կը դողդողան ( Երանեակ աթոռի վրայ կ'իյնայ ):

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ, ԼԵԻՈՆ

ԼԵՒՈՆ, վագելով

Ինչ կը տեսնեմ. ա՛յ ուխտադրուժ աղջիկ... ինձի այնքան գգուանք եւ հիմա ծառային հետ. ապերախտ ծառայ... ( Նիկոն կը հրէ ) ըրածդ ի՞նչ է:

ՆԻԿՈ

Ըրածս... ըրածս... ես ի՞նչ գիտնամ, բան մ'է կ'ընեմ... ես ծառայ մ'եմ, ինչ որ հրամայէ օրիորդը, գայն կատարելու պարտաւոր եմ... ինձի կ'ըսէ, որ դուն Լեւոնն ես... ես Լեւոն չեմ, կ'ըսեմ. անիկա կը պնդէ, թէ ես Լեւոնն եմ. էհ, ըսի, հարկաւ ինքը իզմէ աղէկ գիտէ ով ըլլալս, ինչ ըսեմ, մինչուկ հիմա ինքզինքս Նիկո գիտէի, սխալած եմ, Լեւոն եմ եղեր... ո՞վ գիտէ, ինչ շուն շան որդի սրիկային մէկն է աս Լեւոնը. դուք կը ճանչնաք զինքը թերեւս. համբուրէ զիս ըսաւ. ես, որ մինչեւ հիմա աս բառը շատ քիչ անգամ լսած եմ, գործողութիւնն ալ տեսայ. եւ դուն կը հարցնես, թէ ինչ է ըրածս. աղուոր հարցմունք:

ԵՐԱՆԵԱԿ, սթափելով

Ո՞ր եմ ես... ( Լեւոնը տեսնելով ) ահ, Լեւոն դուն... դուն...

ԼԵՒՈՆ

Ես... ես... կարծեմ անյարմար ժամանակին եկայ... ճիշտ այն կէտին, որ Նիկոն համբոյր կը թափէր այտերուդ:

ԵՐԱՆԵԱԿ

Նիկոն... Նիկոն... ահ, քնացած ժամանակս... թերեւս...

ԼԵՒՈՆ

Ա՛հ, թշուառական... ( Կը գարնէ Նիկոյին, որ կը փախչի ):

ԵՐԱՆԵԱԿ

Ի՞նչ է Նիկոյի յանգանքը:

ԼԵՒՈՆ

Դեռ կը համարձակի՞ս հարցնելու, դռնէն ներս մտած ատենս քեզ կը համբուրէր,  
եւ դուն անխօս...

ԵՐԱՆԵԱԿ

Միթէ դուն չէի՞ր, որ կու գայիր:

ԼԵՒՈՆ

Ի՞նչ կ'ըսէք, ես հիմա եկայ:

ԵՐԱՆԵԱԿ

Պատուհանէն տեսայ, որ կու գայիր... չգիտեմ վրաս թնրութիւն մը եկաւ, աթոռի  
վրայ ինկայ... եւ...

ԼԵՒՈՆ

Նիկոն իզմէ առաջ մտած ըլլալուն պահուեցայ, որ ելնէ վերջը մտնեմ. երբ տեսայ,  
որ ելնելիք չունի, դուռն ալ քաց էր, մտայ, եւ տեսայ որ...

ԵՐԱՆԵԱԿ

Ներէ, ցնորեալ սիրուիւոյդ... ուրեմն Նիկոն սխալմամբ... ( Լալով ) թշուառ եմ  
եւ...

ԼԵՒՈՆ

Սրբէ՛ արցունքդ, կը ներեմ քեզի...

ԵՐԱՆԵԱԿ

Բոլոր գիշերը չքնացայ... մէկը չկրցի գտնել, որ դրկէի քեզի իմաց տալու թէ գայիր. միս մինակ էի... եւ հիմա որ առտու եղաւ...

ԼԵՒՈՆ

Նամակդ առնելուս պէս շուտով տնէն ելայ պարահանդէս գացի, հոն ալ քիչ մը նստայ, տուն դարձայ, որ պառկիմ քնանամ... չկրցի քնանալ որ...

ԵՐԱՆԵԱԿ

Ի՞նչ նամակ... ես չգրեցի:

ԼԵՒՈՆ

Դեռ ցնորա՞ծ ես. գրածդ չե՞ս յիշեր. մանաւանդ իմացուցած էիր, թէ այս առտու կանուխ գամ:

ԵՐԱՆԵԱԿ

Կը սխալիս, Լեւոն...

ԼԵՒՈՆ

Ի՞նչպէս կը սխալիմ, իմ նամակս ալ ընդունած ըլլալդ գրած էիր:

ԵՐԱՆԵԱԿ

Ես նամակ չառի քեզմէ... ո՞րու հետ դրկեցիր:

ԼԵՒՈՆ

Մեր ծերուկ Անթառամին հետ. եւ ինչպէս որ ապսպրած էիր, պատուիրեցի, որ խոհանոցին պատուհանէն վար նետէ: Բայց... նստելու աթոռ չունի՞ք հոս:

ԵՐԱՆԵԱԿ

Չարմանալի բան... սա խուցին մէջ աթոռ կայ, երթամ բերեմ: ( Երթալու վրայ ):

ԼԵԻՈՆ

Թո՛ղ ինձի ես բերեմ:

ԵՐԱՆԵԱԿ

Ի՞նչպէս կրնայ ըլլալ, որ ինձի նամակ գրէ եւ ես ալ պատասխանը դրկեմ...  
բոլորովին անծանօթ են ինձի այս նամակագրութիւնները... խոհանոցին մէջ  
փնտռեմ նայիմ իր նամակը: ( Կերթայ ):

ՏԵՍԻԼ Դ.

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, վերջը ԼԵԻՈՆ, ԵՐԱՆԵԱԿ

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, վագելով

Շունչս հատաւ վագելէն, այնչափ խայտառակութիւն... խեղճ Սոֆիս ալ ետեւէս  
կը վագէր, իյնալով ելնելով. տե՛ս սա երկու ցնդած պատաւներուն ըրածը՝ մեզի  
բռնելու համար պարահանդէս եկած են... թէ որ իմացուի ասոնք... ով կը կանչէ  
զիս իր տունը... անպատիւ եղայ ( Աթոռի վրայ կը նստի ):

ԼԵԻՈՆ, աթոռ բերելով

Ահ, Երանեակ, քու սիրոյդ համար...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ահ, իմ սիրոյս համար... ( Փատով կը ծեծէ ) ահ, իմ սիրոյս համար... ուրիշ տեղ  
մը որոշենք տեսնուելու համար... առանձին մնանք... քեզի կը պատմեմ հօրդ  
ատամնաբուժութիւնը: ( Միշտ ծեծելով ) Շատ կը սիրեմ զքեզ... լեզուով չեն  
կրնար բացատրել, ուր մնաց թէ... փատով... թէ որ ինձի նամակ գրելու ըլլաս...  
հասցէն այսպէս ըլլայ. առ Հ. Գ. Կ. Լեւոն, Սիրահարեալներու փողոց, թիւ 20.

ԼԵԻՈՆ

Ինչո՛ւ կը զարնէք, պարոն:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Շատ կը սիրեն գրեզ...

ԵՐԱՆԵԱԿ

Բաւ է, բաւ, բարբարոս մարդ, չե՞ս ամչնար ուրիշ կնիկներ կը սիրես այդ տարիքիդ մէջ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Դէ՞մ կը խօսիս:

ԵՐԱՆԵԱԿ

Այո՛, կը խօսիմ. ասիկա իմ հոգիս է, դուք զայն մեռցնել կ'ուզէք... կը սիրեն զինքը, ամուսինս է, կ'իմանա՞ք:

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ, ՍՈՖԻ

ՍՈՖԻ

Շունչս հատաւ վազելէն... քեզ ալ կորուսի... ի՞նչ ընեն, ո՞ր պահուիմ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Մի՛ խօսիր, գնա պահուէ սա խուցին մէջ:

ԼԵԻՈՆ

Կը խնդրեն, պարոն Թափառնիկոս, լսէ աղաչանքս, աղջիկդ ինձի տուր, զինքը երջանիկ պիտի ընեն, կ'աղաչեն, անգութ մ'ըլլար, իր սիրովը կ'այրիմ, կը տոչորիմ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ինչ որ կ'ուզեք ան ըրեք, կորսուեցեք, աչքս չտեսնեմ: ( Կը նստի արթողի վրայ ):

ՏԵՍԻԼ Ջ.

ՆՈՅՆՔ, ԹՈՎՄԱՍ

ԹՈՎՄԱՍ

Վերջապե՛ս ձեռք բերի գինքը, բարեւ, պարոն:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ, արթուն ելնելով

Հրամանեցեք պարոն, Թովմաս... այսքան կանուխ... երէկ գիշեր աղուոր  
գուարճացանք, բաւական գինի խմեցինք... ես ալ հիմա արթնցայ... գիշերուան  
հագուստովս կը նստիմ: ( Մեկուսի ) Կեղծենք:

ԹՈՎՄԱՍ

Ձեզի հետ խօսելու եկայ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Կրնաք խօսիլ... բայց առաջուց ըսեք ինձի, տիկինին ցաւը ինչպե՞ս եղաւ:

ԹՈՎՄԱՍ

Շատ հանգիստ է, ձեզի ալ բարեւ ըրաւ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ողջ ըլլայ, խեղճը ո՛րքան կը տանջուէր:

ԹՈՎՄԱՍ

Ձեզի քանի մը խօսք պիտի գրուցեմ, բայց մի սրդողիք:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Սրդողի՞լն ինչ ըսել է. հրամանեցէք խօսեցէք... սուրճ մը բեր, Նիկո:

ԹՈՎՄԱՍ

Դուն սրիկային մէկն ես... դուն անատակին մէկն ես... դուն սինլքորին մէկն ես...  
դուն բարբարոսին մէկն ես... դուն խարդախ մէկն ես... վերջապէս մարդու  
կերպարանքով իշուն մէկն ես...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ո՞վ ըսաւ:

ԹՈՎՄԱՍ, պռռալով

Ո՞վ կարծեցիր զիս... կինս առնես պարահանդէս տանի՛ս:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Հիւանդ էր, օդափոխութեան համար տարի:

ԹՈՎՄԱՍ

Զիս կը խաբէք, սրիկաներ, աշխարհի առջեւ քեզ իբրեւ սրիկա մէկը  
ներկայացնելէն ետքը վրէժ ալ պիտի լուծեմ:

ՏԵՍԻԼ է.

ՆՈՅՆՔ, ՄԱՐԹԱ

ՄԱՐԹԱ

Աստուած փորձանքնիդ տայ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Աս ո՞վ է:

ՄԱՐԹԱ

Տես ով եմ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Պարոնը կարծես իմ կինս է:

ՄԱՐԹԱ

Այդպես է, անիծից ծնունդ. ի՞նչպես, շատ աղուո՞ր է:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ի՞նչ բան:

ՄԱՐԹԱ

Սոխակի պես կը խօսի՞:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ո՞վ:

ՄԱՐԹԱ

Տատրակի պես կը նայի, այնպես չէ՞:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ի՞նչ ըսել կ'ուզեք:

ՄԱՐԹԱ

Ըսել կ'ուզեմ, որ սիրամարգի պէս պճնասէր է: Ինչպէ՞ս էր գնդասեղի ցաւը...  
ասկէ շիտակ բանտ պիտի երթար;

**ԹՈՎՄԱՍ**

Պատասխան տուր, ո՞ր կը գտնուի հիմա իմ կինս:

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**

Ինձի՞ կը հարցնէք:

**ՄԱՐԹԱ**

Համբերեցէք, պարոն Թովմաս, հիմա ամէնն ալ երեւան պիտի գան, նախ եւ  
առաջ սա հագուստս փոխեմ ( Սոֆիին մտած խուցը կը մտնէ ):

**ԹԱՓԱՌՆԻԿՈՍ**, մեկուսի

Ի՞նչպէս պիտի կրնանք ազատիլ:

**ՄԱՐԹԱ**, Սոֆին քաշկոտելով

Ահա ձեր կինը, նամակ մ'ալ ունի ի ձեռին...

**ԹՈՎՄԱՍ**

Սատանորդի կին, կը խաբես զիս... Ի՞նչ նամակ է անիկա, կարդա՛ մտիկ ընենք:

**ՍՈՖԻ**

Ներէ, իմ սիրելի ամուսինս, ( Կը կարդայ ). «Առ Պ. Հ. Թովմաս Մելքիսեդեկեան».

**ԹՈՎՄԱՍ**

Ինձի համար է... չըլլայ որ առետրական գաղտնիք մը ըլլայ:

**ՍՈՖԻ**, կարդալով

«Սիրեցեալդ իմ, անցեալ օր եկեղեցոյն դրան առջին կեցած ինձի սիրոյ նշաններ կ'ուղղէիր ձեռքովդ... Քովս եղող մէկ քանի կնիկներ տեսան ու կասկածի գացին, կ'աղաչեմ ուրիշ անգամ զգուշանաս... Թափառնիկոսին տուն չգտնուած ժամանակը...

ՄԱՐԹԱ, մեկուսի

Աս ի՞նչ է...

ՍՈՖԻ, շարունակելով

Առտուներն են... կրնաք գալ ու տեսութիւն ընել հետս

ՄԱՐԹԱ»:

ԹՈՎՄԱՍ, մեկուսի

Ով Աստուած իմ, ուրկէ՞ գտար այդ նամակը...

ՍՈՖԻ

Ձեր գրպանէն...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Դուն սրիկային մէկն ես... դուն անառակին մէկն ես... դուն ծերացած ցնդած ցնդկած պառաւին մէկն ես... կինս ալ անանկ է... զիրար կը սիրէք, անամօթներ, երիտասարդներէն ամչցէ՛ք:

ԹՈՎՄԱՍ, շփոթուած

Ե՞ս:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Էական դերանուն եզակի Ա. դէմք ուղղական:

ՄԱՐԹԱ

Մե՞նք:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Էական դերանուն յոգնակի ուղղական Ա. դէմք:

ԹՈՎՄԱՍ

Ամենեւին...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Մակբայ:

ԹՈՎՄԱՍ

Սուտ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ածական:

ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՅՆՔ, ՆԻԿՈ

ՆԻԿՈ

Ամէնքն ալ հոս են...

ԵՐԱՆԵԱԿ

Ա՛հ, իմ սիրուն Լեւոնս...

ՆԻԿՈ

Կը յիշե՞ս, օրիորդ, քիչ մը առաջ ես Լեւոնն էի... ի՞նչ աղէկ էր Լեւոնութիւնը:

ԹՈՎՄԱՍ, ցած առ Մարթա

Ի՞նչպէս եղաւ որ սա նամակը իրենց ձեռքը կ'անցնի:

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ, ցած առ Սոֆի

Թէ որ այս նամակը չգողնայի՜ր:

ԼԵՒՈՆ, ցած առ Երանեակ

Անգամ մը քեզի հետ ամուսնանամ:

ՄԱՐԹԱ, ցած առ Թովմաս

Ի՞նչ պիտի ընենք:

ՍՈՖԻ, ցած առ Թափառնիկոս

Տեսնենք ի՞նչ պիտի որոշեն:

ԹՈՎՄԱՍ, ցած առ Մարթա

Պատիւնիս չարատելու համար անուշի կապենք:

ՄԱՐԹԱ, ցած առ Թովմաս

Ես ալ այն պիտի ըսէի:

ԹԱՓԱՌ-ՆԻԿՈՍ, ցած առ Սոֆի

Անուշութեամբ լնցնենք սա խաղը:

ԹՈՎՄԱՍ

Չէք խօսիր...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ի՞նչ պիտի խօսիմ. իմ կինս կը սիրես:

ԹՈՎՄԱՍ

Հապա դուն որ իմինս կը սիրես:

ՍՈՖԻ

Եւ տիկինը, որ իմ ամուսինս կը սիրէ:

ՄԱՐԹԱ

Եւ դուն որ...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Դատի ելլալու ենք, որպէսզի իրաւունքը երեսան ելնէ:

ԹՈՎՄԱՍ

Անպատիւ պիտի ըլլանք ամեննիս ալ:

ՍՈՖԻ

Թող ըլլանք, իրաւունք կ'ուզենք մենք...

ՄԱՐԹԱ

Անամօթներ... Ի՞նչ իրաւունք ունիք իրաւունք ունենալու:

ՏԵՍԻԼ Թ.

ՆՈՅՆՔ, ՄԱՐԳԱՐ

ՄԱՐԳԱՐ

Բարեւ, պարոնայք եւ տիկնայք:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Բարի եկար, պարոն Մարգար, մեր դատը դուն տես. պարոնը իմ կինս կը սիրէ, ես ալ անորինը կը սիրեմ. իրաւունքը որո՞ւ քով կը մնայ:

ՄԱՐԳԱՐ

Դուք արդէն դատը կտրեր էք, կոհի պէտք չէ, հաշտուեցէք:

ԵՐԱՆԵԱԿ

Հապա ե՛ս, որ Լեւոնը կը սիրեմ:

ՄԱՐԹԱ

Պապանձէ՛:

ՄԱՐԳԱՐ

Ահա ես ալ հրապարակաւ կը յայտնեմ միտքս, իմ փափաքս ալ ան է, որ Երանեակը Լեւոնի հետը ամուսնանայ, եւ մեծապէս շնորհակալ եմ որ առաջուց իմաց տուաւ:

ԵՐԱՆԵԱԿ

Պարոն Մարգարի ցուցուցած մարդասիրութենէն գոհ եմ, եւ ահա կը խոստանամ մինչեւ վերջին շունչս Լեւոնի հետ ապրիլ:

ՄԱՐԹԱ

Եւ դուն կը խոստանա՞ս ինձի հաւատարիմ մնալ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Այո՛:

ՄԱՐԹԱ

Այս եղելությունները պիտի մոռցուին... չեղածի պէս...

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Այո՛, անանկ պիտի ըլլայ:

ԹՈՎՄԱՍ, առ Սոֆի

Ձեր ակռայի ցաւն ալ կ'անցնի՞:

ՍՈՖԻ

Կ'անցնի:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ամենքնիս ալ ուխտենք իրարու հաւատարիմ մնալ, զիրար սիրենք եւ այս գաղտնիքը մեր մէջ պահենք. որպէսզի պատիւնիս չարատի:

ՄԱՐԹԱ

Ահ, որքան որ չար բնատրութիւն ունենաս, դարձեալ կը սիրեմ զքեզ ( Կը պագնէ Թափառնիկոսը ): Ասանկ պարագաներու մէջ չեմ կրնար արտասուքս զսպել: ( Լալով ) Երբ կը սկսին համբոյրները բերնէս վազել, արցունքն ալ աչքէս կը հոսի. դուն զիս լաւ մը չես ճանչցեր, քեզի համար կը մեռնիմ ես:

ԹՈՎՄԱՍ, լալով

Ջիս յարտասուս շարժեցիր, իմ սիրուն Սոֆիս... ո՛րքան ժամանակ է որ շուրթերս այտերուդ դպած չէին:

ԼԵԻՈՆ

Ա՛հ, իմ Երանեակս:

ԵՐԱՆԵԱԿ

Ա՛հ, իմ Լեւոնիկս:

ՆԻԿՈ

Հապա, օրիորդ, որ գիս Լեւոն ըրիր:

ՄԱՐԹԱ

Աշխատէ, աղջիկս, Լեւոնը սիրելու:

ԹՈՎՄԱՍ

Առաւօտ եղաւ, երթանք, Սոֆի:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Քովս եկուր, անուշիկս:

ՄԱՐԹԱ

Ըհ, բերանդ պագնեմ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ըհ, լեզուդ խածնեմ:

ՍՈՖԻ, մեկուսի

Ինչպէս որ ձեռքս խածաւ:

ՄԱՐԹԱ

Ձեռքերդ սիրեմ:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Սիրէ, սիրէ, կշտացիր:

ՆԻԿՈ

Ինձմէ զատ ամենքն ալ ոտքի վրայ են:

ԹԱՓԱՌՆԻԿՈՍ

Ի՞նչ կը խնդաք ( Կերզէ )

Հոս դպրոց մ'է բարոյական,  
Կատավարիչն է ձեր խղճի ձայն,  
Թատրերգութիւնք անոր դասեր,  
Որոնց մենք ենք դասատուներ:

( Ամենքը մէկէն եղանակաւ )

Ի՞նչ ծանր պաշտօն:

Մնաք բարեաւ, հանդիսականք,  
Կ'աղաչենք ձեզ ա'լ չմոռնաք,  
Կերակրեցէք մեզ նիւթապէս,  
Որ կերակրիք բարոյապէս:

( Ամենքը երթալու վրայ )

ՆԻԿՈ

Հապա օրիորդը, որ զիս Լեւոնը ըրաւ:

ՎԵՐՉ